ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 9-ից 14-ը Ինդոնեզիա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Բալի նահանգ, հոկտեմբերի 9-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Արժույթի Միջազգային Հիմնադրամ (ԱՄՀ), Համաշխարհային բանկ (ՀԲ)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Արժույթի Միջազգային Հիմնադրամի/Համաշխարհային Բանկի տարեկան հանդիպումների շրջանակներում կազմակերպված միջոցառումներին և երկկողմ ձևաչափով հանդիպումներին, մասնավորապես.

- Մասնակցություն լիագումար նստաշրջանին,
- Մասնակցություն ՀԲ Մարդկային կապիտալի գագաթնաժողովին և վերջինիս շրջանակներում կազմակերպված կլոր-սեղան քննարկմանը,
- Հանդիպումներ Ներդրումային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ («Deustche Bank», «Citibank», «Raiffeisen» բանկ, «Euromoney»),
- Հանդիպում ՀԲ-ի գործադիր տնօրեն Ֆրանկ Հիմսկերկի հետ,
- Հանդիպում ՀԲ-ի փոխնախագահ Սիրիլ Մյուլլերի հետ,
- Հանդիպում ԱՄՀ գործադիր տնօրեն Էնթոնի Դե Լանոյի հետ,
- Հանդիպում ԱՄՀ հարկաբյուջետային հարցերով վարչության պետ Վիտոր Գասպարի հետ,
- Հանդիպում Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներկայացուցիչների հետ:

6. **Քննարկված թեմաները՝**

Արժույթի Միջազգային Հիմնադրամի/Համաշխարհային բանկի տարեկան հանդիպումները հնարավորություն են տալիս բարձրաստիճան հարթակում համաշխարհային ֆինանսատնտեսական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ քննարկումներ իրականացնել, երկկողմ հանդիպումներ ունենալ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, վարկանիշային և այլ կազմակերպությունների պատվիրակների և ներկայացուցիչների հետ, քննարկել նաև համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև մասնակցել գլոբալ մարտահրավերներին առնչվող գիտաժողովներին և միջոցառումներին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

2018թ. տարեկան հանդիպումների օրակարգը հագեցած էր և ընդգրկում էր մի շարք հանդիպումներ, կլոր-սեղանի ձևաչափով քննարկումներ և միջոցառումներ:

Տարեկան հանդիպումների շրջանակներում իրականացված նշանակալի իրադարձություններից էր **ՀԲ Մարդկային կապիտալի զարգացմանը** նվիրված գագաթնաժողովը, որտեղ Հայաստանը ներկայացված էր որպես «Early Adobter» երկիր: Այս համատեքստում տեղի է ունեցել կլոր-սեղան քննարկում, որի ընթացքում մասնակից երկրների ներկայացուցիչները ներկայացրել են մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված իրենց երկրներում տարվող քաղաքականությունները և մտքեր են փոխանակել նախաձեռնության շրջանակներում հետագա փոխգործակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Տարեկան հանդիպումների ընթացքում տեղի ունեցավ երկկողմ հանդիպում **Մուդիս վարկանիշային կազմակերպության** ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց ՀՀ տնտեսական իրավիճակը և ընդգծվեց վարկանիշային կազմակերպությունների մեծ դերը արտաքին ներդրումների ներգրավման գործում: Մուդիսի կողմից բարձրացվեցին մի շարք հարցադրումներ առաջիկա կայանալիք խորհրդարանական ընտրությունների սպասումների, Ամուլսարի շահագործման և ընդհանուր մակրոտնտեսական իրադրության ու ՀՀ հարկաբյուջետային

քաղաքականության վերաբերյալ: Մեր կողմից Մուդիսին ուղղված այն հարցադրմանը, թե ինչպիսի քայլերը կարող են նպաստել ՀՀ վարկանիշի բարելավմանը, նշվել է, որ մեծ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել հատկապես հարկային բարեփոխումներին, արտահանմանն ուղղված տնտեսական դիվերսիֆիկացիային, ֆիսկալ քաղաքականությանը, ինչպես նաև ընտրությունների կազմակերպմանը:

Հաջորդիվ տեղի են ունեցել առանձին երկկողմ հանդիպումներ **«Deustche Bank» ներդրումային բանկի, «CitiBank»-ի, «Raiffeisen» բանկի և Euromoney խմբի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ,** որոնց շրջանակներում քննարկվել են ներկա մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները և առանձնահատուկ՝ հարկաբյուջետային քաղաքականությունը, ինչպես նաև ՀՀ կողմից 2020թ. եվրապարտատոմսերի մարմանն առնչվող հարցեր: Մասնավորապես **«CitiBank»-ի** հետ քննարկվել են պարտատոմսերի թողարկման հնարավոր սցենարներ, որոնք բխում են ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունից: Նաև հայկական կողմից նշվել է, որ նոր եվրապարտատոմսերի թողարկման որոշում կայացնելու դեպքում եվրապարտատոմսերի թողարկումից առաջ հայկական կողմը մրցութային կարգով ընտրելու է «Lead manager»-ներին (գլխավոր տեղաբաշխողներ): **«Deustche Bank»** ներդրումային բանկի հետ քննարկման առանցքում ևս եվրապարտատոմսերի թողարկմանն առնչվող հարցերն են եղել: Վերջինիս ներկայացուցչի կողմից նշվել է, որ եթե Հայաստանը 2020թ. նոր եվրապարտատոմսերի թողարկման որոշում կայացնի, ապա անհրաժեշտ կլինի նախապատրաստական աշխատանքներն սկսել 2019թ. սեպտեմբերից և ընդգծվել է, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ընտրությունների պատշաճ կազմակերպմանն ու ՀՀ-ի ֆիսկալ դիրքին: «Euromoney» խմբի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում մակրոտնտեսական ու ներդրումային միջավայրերի քննարկումից զատ առաջարկ է եղել Հայաստանի մասով տնտեսական հոդված հրապարակել խմբի ամսագրում, ինչին ի պատասխան հայկական կողմը պատրաստակամություն է հայտնել ցուցաբերելու համապատասխան աջակցություն:

Տեղի է ունեցել նաև երկկողմ հանդիպում Համաշխարհային բանկի խմբի անդամ **Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներկայացուցիչների (ՄՖԿ)** հետ, որի

ընթացքում քննարկվել են կորպորացիայի կողմից մասնավոր ներդրումների ընդլայնման հնարավորությունները: Միաժամանակ ՄՖԿ ներկայացուցիչների կողմից բարձրացվել են որոշ մտահոգություններ կապված Երևանի ՋԷԿ-ի ներդրումային ծրագրի շուրջ: Հայկական կողմից նշվել է, որ առանցքային հարցերը հավանաբար կապված են բնապահպանական և սոցիալական ազդեցությունների հետ, և եթե այդ ծրագրի նախագծման փուլում ապահովվել են պատշաճ բնապահպանական և սոցիալական ազդեցությունների փորձաքննությունները, այդ դեպքում անհանգստության առիթներ քիչ կան: Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև էներգետիկայի ոլորտում մասնավոր ներդրումների հարցեր:

Հոկտեմբերի 12-ին կայացավ լիագումար նստաշրջանը, որն այս տարի կարևորվեց մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված միասնական ջանքերի ուղղորդման կոչով:

Տարեկան ժողովի ընթացքում տեղի ունեցան նաև երկկողմ հանդիպումներ **Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի բարձրաստիճան պաշտոնյաների հետ:** Համաշխարհային բանկի պատվիրակության հետ քննարկվեցին Երկրի վերլուծության փաստաթղթին առնչվող հարցեր, իսկ ԱՄՀ պատվիրակության հետ՝ նոր ծրագրին առնչվող հարցեր, ինչպես նաև ֆինանսական և տնտեսական ոլորտներին ուղղվող տեխնիկական աջակցության մի շարք հարցեր: Մասնավորապես, ՀԲ փոխնախագահ Սիրիլ Մյուլլերի հետ քննարկվեց «Երկրի գործընկերության շրջանակ» փաստաթուղթը և կարևորվեց ՀԲ կողմից վերջինիս հնարավորին շուտ հաստատումը: Անդրադարձ կատարվեց նաև պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավելիք հնարավոր բյուջետային աջակցությանն առնչվող հարցեր: Միաժամանակ, բանկի պորտֆելի հնարավոր ընդլայնման առումով նշվեց, որ այս փուլում կարևոր է ընթացիկ ծրագրերի գծով մասհանումների և կատարողականի ապահովումը, որը միաժամանակ կնպաստի արդեն իսկ ստորագրված վարկային պայմանագրերի շրջանակներում կուտակված 1.7 մլրդ ԱՄՆ դոլարի չափով չմասհանված մնացորդի նվազմանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև էներգետիկ ոլորտում մասնավոր ներդրումների ընդլայնման հնարավորություններին առնչվող հարցեր: **ՀԲ հոլանդական խմբի գործադիր տնօրեն Ֆրենկ Հիմսկերկի հետ** քննարկվեցին ընթացիկ

համագործակցությանն առնչվող հարցեր, մասնավորապես «Երկրի գործընկերության շրջանակ» փաստաթղթի վերջնականացմանն առնչվող հարցեր:

ԱՄՀ հոլանդական ընկերակցային խմբի գործադիր տնօրեն Էնթոնի Դե Լաննոյի հետ քննարկվեց ԱՄՀ-ի հետ հնարավոր նոր ծրագրին առնչվող հարցեր: Գործադիր տնօրենի կողմից նշվել է, որ հարցին անդրադարձ կկատարվի միայն ընտրություններից հետո: Քննարկվեցին նաև հարկային բարեփոխումներին առնչվող մի շարք հարցեր: ԱՄՀ հարկաբյուջետային հարցերով վարչության պետ Վիտոր Գասպարի հետ հանդիպման ընթացքում քննարկումների հիմնական թեման եղել է մի շարք ուղղություններով ԱՄՀ կողմից տեխնիկական աջակցության տրամադրումը: Վ. Գասպարը պատրաստակամություն է հայտնել շարունակել համագործակցությունը տեխնիկական աջակցության տրամադրման հետևյալ ուղղություններով՝ Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման և կոորդինացման համակարգի, Հարկային եկամուտների պոտենցիալ մակարդակների և հարկային ճեղքի գնահատման գործիքների և ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով միջազգային փորձի փոխանակում:

Ապահովվել է նաև մասնակցություն Տարածաշրջանային տնտեսական ակնարկի շնորհանդեսին, որտեղ ներկայացվում են Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի տնտեսական տարածաշրջանային զարգացումներն ու հիմնական տնտեսական միտումները, Հոլանդական ընկերակցային խմբի հանդիպմանը, որի անդամ է նաև Հայաստանը և որտեղ ներկայացվում և ամփոփվում են խմբի կողմից իրականացվող աշխատանքները:

Տեղի է ունեցել նաև երկկողմ հանդիպում Ասիական զարգացման բանկի փոխնախագահ Վենկայ Ժանգի հետ, որի ընթացքում կարևորվել է այս տարի ստորագրվելիք 50 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ բյուջետային աջակցության վարկային համաձայնագիրը և վերջինիս առնչող երկկողմ ներքին ընթացակարգերի հնարավորին արագ ապահովումը: Անդրադարձ է կատարվել մի շարք բարեփոխումների ուղղություններով ԱԶԲ-ից տեխնիկական աջակցության ներգրավմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ՝ կողմերի հետ համագործակցային ուղղությունների շարունակականության ապահովման և ընդլայնման շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջազգային դոնոր գործընկերների, ներդրումային և վարկանիշային կազմակերպությունների հետ համագործակցության համատեքստում առաջարկում ենք ընդունել ի գիտություն, որ կայանալիք խորհրդարանական ընտրությունները լինելու են վերջիններիս դիտակետում: Տնտեսական առումով անհրաժեշտ է ուշադրության ներքո պահել հարկային բարեփոխումները և հարկաբյուջետային կայունությանն ուղղված ջանքերը, որոնք մեծապես կարևորվում են վերոնշյալ կազմակերպությունների կողմից:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

17.10.2018թ